ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

---------- N ----------

<<ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ>> փակ
բաժնետիրական ընկերության տնօրեն
պարոն Նորիկ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ
էլ.հասցե՝ marketing@etalongroup.am

Հարգելի պարոն Բունիաթյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ>> փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև՝ վերջինիս կողմից ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքների առկայությամբ, 2020 թվականի ապրիլի 30-ին կնքվել է Մոդուլային տիպի, պողպատե կոնստրուկտիվ համակարգով սպանդանոցների շենքերի կառուցման (բազմակի կիրառման) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/11 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Ընկերության կողմից ներկայացված 2020 թվականի ապրիլի 27-ի No O.AB.100.12CIB.PIED.2.4311.20 և O.AB.100.12CIB.PIED.2.4312.20 բանկային երաշխիքների իսկության ստուգման վերաբերյալ հարցում է ուղարկվել <<Ամերիաբանկ>> փակ բաժնետիրական ընկերություն և ստացվել է պատասխան, որ նման բանկային երաշխիքներ բանկի կողմից չեն թողարկվել:

Հիմք ընդունելով վերը նշվածը, պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը, պայմանագրի 7.3-րդ կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջը (այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) ապա այդ հիմքն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե

արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար) Պատվիրատուն Ընկերության հետ կնքված պայմանագիրը 2020 թվականի մայիսի 27-ից միակողմանի լուծում է:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը 2020 թվականի մայիսի 27-ին կտեղադրվի gnumner.am կայքում և կուղարկվի պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Հարգանքով՝

Invalid signature

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչություն. Հասմիկ Բաղինյան
Հեռ: 011621822